Հաստատված է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2022թ. սեպտեմբերի 5-ի, №1 նիստում
գիտական խորհրդի նախագահ
Սիրուհի Գևորգյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ «ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՈԴՈՒԼՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 30 ԿՐԵԴԻՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (այսուհետ՝ համալսարան) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհեր) տվյալ (դասավանդվող) առարկայի մասնագիտական ոլորտում բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի (ոչ մանկավարժի) որակավորում ունեցող շրջանավարտների, վճարովի հիմունքներով կրթական ծրագրերի կազմակերպական հիմքը, ինչպես նաև այդ ծառայությունների մասնակից կողմերի՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ օրենքը կրթության մասին, ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական կրթության մասին, ՀՀ օրենքը հանրակրթության մասին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հուլիսի 29-ի N1387-Ա/2 հրամանով հաստատված «Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագիրը և դրա ուսումնաթեմատիկ պլանը», համալսարանի կանոնադրությունը և իրավական այլ ակտեր:

3. Կրթական ծրագիրը նպատակաուղղված է կրթական ծառայություն մատուցել տվյալ (դասավանդվող) առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող այն անձանց (այսուհետ՝ դիմորդ), որոնք ցանկություն ունեն տվյալ մասնագիտական դասընթացների միջոցով հավաքելու մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող 30 կրեդիտ:

Ինչպես նաև բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող այն անձանց, որոնք աշխատանքի ընդունվելուց հետո պարտավորվում են՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի

«Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի» հավաստագիր:

II. ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

6.Դիմում-հայտերը լրացնելը և մուտքագրելը՝

6.1. առաջին փուլի դասընթացին մասնակցելու համար, դիմորդը համալսարանի ընդունող հանձնաժողով սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 25-ը՝ մինչև ժամը 18:00-ն լրացնում է դիմում-հայտ,

6.2. երկրորդ փուլի դասընթացին մասնակցելու համար՝ հունվարի 20-ից փետրվարի 20-ը՝ մինչև ժամը 18:00-ն:

7. Դիմում հայտին կից փաստաթղթերի փաթեթը ներառում է.

7.1. ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի բնօրինակը և պատճենները (դիմորդի կողմից ներկայացված դիպլոմի իսկությունը պարզելու նպատակով հանձնաժողովն իրավասու է ըստ անհրաժեշտության դիմորդից պահանջել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» ներկայացնել տեղեկանք դիպլոմի իսկության մասին: Փաստաթղթերի բնօրինակների և պատճենների համապատասխանությունը պարզելուց հետո բնօրինակները վերադարձվում են դիմորդին):

7.2. երկու լուսանկար (3x4 չափսի).

7.3. անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ նույնականացման քարտ).

8. Դասընթացները կազմակերպվում են հիբրիդային ձևաչափով (առցանց և առերես)՝ համաձայն ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 11-ի 124-Ն որոշման:

9. Տարվա ընթացքում կազմակերպվում է երկու փուլով՝

9.1. առաջին փուլի համար՝ տվյալ ուստարվա հոկտեմբերի 1-ից մինչև հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում,

9.2. երկրորդ փուլի համար՝ տվյալ ուստարվա մարտի 1-ից մինչև հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածում:

10. Կրեդիտային և մոդուլային ուսուցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում կիրառվում են սովորողների գիտելիքների վերահսկման և գնատաման հետևյալ ձևերը.

10.1. ընթացիկ ստուգում և գնահատում,

10.2. միջանկյալ ստուգում և գնահատում,

10.3. հանրագումարային ստուգում և գնահատում:

11. Սովորողի կողմից կրթական ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ ատեստավորմամբ (հետազոտական աշխատանքի պաշտպանություն և մասնագիտական ամփոփիչ քննություն):

12. Ամփոփիչ քննությունները կանցկացվեն՝

12.1. առաջին փուլի համար՝ հունվարի 20-ից մինչև փետրվարի 9-ը:

12.2. երկրորդ փուլի համար՝ հունիսի 20-ից մինչև հուլիսի 5-ը:

13. Ամփոփիչ քննությունների հանձնաժողովի ստեղծումը՝

13.1. Ամփոփիչ քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով).

13.2. քննական հանձնաժողովը կազմում է քննական աշխատանքների տարբերակները և քննական այլ նյութեր.

13.3. քննության ավարտից հետո քննական հանձնաժողովի նախագահը կազմում ու

ռեկտորին է ներկայացնում հաշվետվություն:

14. Ամփոփիչ քննության կազմակերպումը, անցկացումը և գնահատականի բողոքարկումը՝

14.1. քննություններն անցկացվում են մասնագիտական առարկաների առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան.

14.2. ուսումնառողի պատասխանը գնահատվում է 100-միավորային համակարգով.

14.3. քննությունները տեսաձայնագրվում են:

15. Քննության արդյունքների հրապարակումը և բողոքարկումը՝

15.1. քննությունների գնահատականները ուսումնառողին հայտնվում են քննության օրը՝ քննասենյակում, գնահատականի հետ անհամաձայնության դեպքում դիմորդը, մինչև քննասենյակից դուրս գալը, կարող է բողոքարկել քննական հանձնաժողովի նախագահին.

15.2. բողոքարկման համար ուսումնառողը դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:

15.3. դիմումում նշվում է քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ ուսումնառողը համաձայն չէ.

15.4. բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն ուսումնառողի կողմից նշված հատվածը (հատվածները): Մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում.

15.5. բողոքարկված քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել.

15.6. քննության ընթացքում հիվանդության պատճառով քննությունն ընդհատած ուսումնառողի վերաբերյալ կազմվում է արձանագրություն հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

15.7. քննական հանձնաժողովի նախագահն արձանագրությունը ներկայացնում է ռեկտորին՝ քննության ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում և որոշում է ընդունում քննությունն ընդհատած ուսումնառողին լրացուցիչ քննության թույլատրելու և օրը նշանակելու մասին:

15.8. տվյալ դասընթացի քննությունների վերջին օրը բացակայած կամ քննությունն ընդհատած ուսումնառողները չեն կարող հանձնել այդ քննությունը,

15.9. քննությունների վերջին օրը բացակայած կամ քննությունն ընդհատած ուսումնառողները այն կարող են հանձնել հաջորդ փուլի ավարտին:

III. ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

16. Կրթական ծառայությունն իրականացվում է համալսարանի համապատասխան մասնագետների միջոցով:

17. Կրթական ծառայության իրականացման ընթացքում կատարողը պարտավոր է ապահովել մասնակիցների անվտանգությունը և սանիտարահիգիենիկ պայմանները:

18. Համալսարանի ռեկտորը հաստատում է կրթական ծրագրի՝

1) դասացուցակը.

2) դասամատյանը:

19. Հաստատության գիտական խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի հրամանով հաստատվում է կրթական ծառայության՝

1) վարձավճարի չափը.

2) կրթական ծառայություններ իրականացնողների վճարի չափը.

3) միջոցների բաշխման համամասնությունները:

20. Կրթական ծառայությունների համար վճարումները կատարվում է բանկային փոխանցման միջոցով:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն աշխատակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են համալսարանի կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:
22. Սույն աշխատակարգը հրապարակվում է համալսարանի պաշտոնական կայքում և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հավելված 1

Նախատեսվում է իրականացնել հետևյալ լրացուցիչ կրթական ծառայությունը.

Կրթական ծառայություն	**Ծրագրի վճարի չափը /ՀՀ դրամ/**
«Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման» կրթական ծրագիր	**180.000**

ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վճարովի կրթական ծառայությունների իրականացումից ստացված եկամուտներից գոյացած բյուջեյի ծախսերի ուղղությունները բերված են ստորև աղյուսակում.

Հոդվածի անվանումը	**Եկամուտ**
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	70%
Գրենական և գրասենյակային ծախսեր	3%
Վերադիր ծախսեր	5%
Շահույթ	22%
Ընդամենը	100%